

թիւներն, անշուշտ, պահելով, Սաֆո Յակոբեանը շարունակողն է իր տա- դանդաւոր հայրենակից Քրիստափոր Կարա-Մուրզայի գործի: Կարա-Մուր- զան առաջինը եղաւ, որ ազգային ու ժողովրդական երգը կովկասում դարձ- րեց ընտանիքի ու հանրային հաւա- քայքների սեփականութիւն եւ մանա- պարի բաց արաւ Կովկասների հա-

մար: «Սիփան» նոյն դերը կատարեց, աւելի համեստ պայմաններում, փարի- զանայ գաղութի մէջ: Յուսանք, որ իր կեանքի նոր շրջանում էլ «Սիփան»-ը կը շարունակէ իր հիմնադրի աւանդու- րիւններն ու նպատակները եւ կը մնայ ժողովրդական լայն զանգւածների սի- բիլին:

ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ԵՒ ԵԱՎՈՐՈՎԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Օգոստոս 18-ին, Բուլղարահայ գա- ղուրը ժողովրդական ջերմ խանդավա- ութեամբ հանդէսներ կատարեց հայ մեծանուն յեղափոխական Քր. Միֆա- յէլեանի մահուան երեսմամբակի եւ բուլ- զար նշանաւոր բանաստեղծ Փէիւ Եա- վորովի արձանի բացման առթիւ: Ար- ձանը, գործ արձանագործ Գ. Ահարոն- եանի, կառուցած է հայերի նախաձեռ- նութեամբ եւ հաւաքած միջոցներով:

Եւորովը նշանաւոր է իր «Արմենցի» (Հայերը) ոտանաւորով, որ եթէ հայե- րի համար Բանգ է իր բովանդակու- րէամբ, բուլղար գրականութեան մէջ յայտնի է, որպէս գեղարւեստական մե- ծարժէք գործ, բուլղար բանաստեղծու- րեան գոհարներէից մէկը: Առաջ եմք բե- ռում այդ ոտանաւորը բանաստեղծ Ար- մէն Սեւանի Թարգմանութեամբ:

ՀԱՅԵՐ

Հալածւածներ բշտառ, չնչին բեկորներ՝
Ժողովուրդի մ'արի, այսօր նահատակ,
Ահաբեկ ու գերի մօր մը զաւակներ,
Զոհեր՝ անհունօրէն վսեմ քաջութեան,
Հայրենիքէն հեռու օտար երկնի տակ,
Հիւժած, գումատ, հաւաքած տուն մը խաբխուլ,
Կըմպեն, ու իրենց կարիւնի սիրտը՝ վէրքէն.
Կերգեն, ինչպէս երգն՝ արցունքին ընդմէջէն:

Անոնք կերգեն. կուգեն մոռնալ՝ հարբելով՝
Հին տառապանքն ու ցաւերը այսօրւան,
Յիշատակը խեղդել հրաշունջ գիւնիով,
Քրքնացընել հոգին ջախջախ կրծքին տակ,
Կուգեն՝ հակած գանկերուն մէջ անհետի
Տառապագին պատկերն անոր մայրական.
Կուգեն անոր օգնութեան կանչը վերջին
Ա՛լ չը լսել, մոռացութեան մէջ գիւնով:
Հօտ մը՝ ինչպէս գազանէ մը հալածւած,

Ահա անոնք տարտղնած են ամէն տեղ,
 Ու կատաղի բռնակալը արնախանձ՝
 Անոնց գլխուն կը պահէ իր սուրը մերկ:
 Խեղճ հայրենիքն արիւնի մէջ են լքած,
 Բոցերու մէջ են լքած տունն հայրենի,
 Օտարութեան մէջ անոնք խնրք մնացած,
 Միակ նամբան, գինետանն է՝ կը բացուի:

Անոնք կերգեն...: Վայրենի է երգն իրենց,
 Ու վերքերը անոնց սիրտը կը կրծեն.
 Ու կը խեղդէ գանոնք քէնը բոցակէզ,
 Ու արցունքը կիյնայ դալուկ այտերէն...
 Ճնշած սրտերն դառնն մաղձով են լեցուն,
 Ու կրակը կայրէ միտքը գանկին մէջ,
 Ու կը փայլի շանքը արնոտ աչքերուն,
 Ու կը խօսի հոգիներուն մէջ վերէժ:
 Իսկ փոքորիկը ձմեռն կը ձայնակցի,
 Կարծես, կռոնայ անեղօրէն ցայգուն գիրկ.
 Կը տարածէ ապստամբ երգն աշխարհի
 Վերայ՝ ինչպէս անեղ որոտ ու մրրիկ:
 Ու երկինքը կը մըռայլի աւելի,
 Ու աւելի կը խոժոռի ցուրտ գիշեր,
 Կերգէ խումբը, ուժգնութեամբ աւելի
 Կըլլայ անեղ փոքորիկըն ալ ընկեր...:

Կը խմեն ու կերգեն... անոնք՝ բեկորներ
 Ժողովուրդի մ'արի, այսօր նահատակ,
 Ահաբեկ ու գերի մօր մը զաւակներ,
 Զոհեր՝ անհունօրէն վսեմ քաջութեան,
 Հայրենիքէն հեռու, բոկոտըն ու մերկ,
 Օտար երկիր՝ հաւաքած տուն մը խարխուլ,
 Կըմպեն - գինով տառապանքը կը մոռնան,
 Կերգեն, ինչպէս երգն՝ արցունքին ընդ մէջէն...:

ՇԻՐՎԱՆԶԱԳԻՏԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Շիրվանգաղէի քաղումը երեսնամ
 կատարել է մեծ հանդիսաւորութեամբ:
 Ի գնահատութիւն հանգուցեալի մատու-
 ցած ծառայութիւնների՝ Հայժողովոյն
 ինքը որոշել է. -

Ա. - Լոյս ընծայել Շիրվանգաղէի եր-
 կերի լիակատար ժողովածուն ակադե-
 մական հրատարակութեամբ:

Բ. - Շիրվանգաղէի անունով տարեկան

20.000 բուրլու մի հիմնադրամ սահմա-
 նել Հայաստանի քաղաքական գրակա-
 նութեան զարգացման համար:

Գ. - Հայաստանի գրական բանգարա-
 նում յատուկ բաժին յատկացնել Շիր-
 վանգաղէի կեանքին ու գործունէութեան
 վերաբերուող նիւթերի համար:

Դ. - Սահմանել Շիրվանգաղէի անուն
 տասը քաղաք, որոնցից եօթը Հայաս-